ՄՈՍԿՎԱՅԻ Մ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (X-XII դասարան)

ՀԱՐԳԵԼԻ՛ ԴԻՄՈՐԴ

Ընդունելության թեստը բաղկացած է *3* մասից*:*

I* մասը գնահատվում է *10* միավոր, ընդգրկված է *5* հարց, յուրաքանչյուրը գնահատվում է *2* միավոր*:

II* մասը գնահատվում է *30* միավոր*:* Տրված բնագրի հիման վրա անհրաժեշտ է կատարել *15* առաջադրանք, յուրաքանչյուրը գնահատվում է *2* միավոր*:

III* մասում առաջարկվում է փոխակերպել տրված նախադասությունները և կազմել գծապատկեր*:* Առաջադրանքը գնահատվում է *10* միավոր. յուրաքանչյուր առաջադրանքը գնահատվում է *2* միավոր*:* Փոխակերպումներում թույլ տրված ուղղագրական կամ կետադրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է *0.1* միավոր, գծապատկերը կազմելիս նախադասությունը չհամարակալելու համար՝ *0.5* միավոր*:

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների*:*

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է *120* րոպե*:*

ՄԱՍ I

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. Ըստ անհրաժեշտության լրացնել բաց թողած տառերը.

Ակադեմ__ա, ան__թևան, ձվա__եղ, որ__ատունկ, վար__բեկել, աղ__ան, խոչ__նդոտ, օր__րոց, սերկ__իլ, երբև__:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Վերականգնել տրված բառերի հնչյունափոխված արմատների անհնչյունափոխ տարբերակները.

Ընձուղտ _____

Ուղղագրություն_____

Թխամաշկ_____

Հոգեվիճակ_____

Արնաներկ_____

Քննախույզ_____

Պտտվել_____

Ձգել_____

Փտել_____

Ստուգայց_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով.

Ընդ (ամենը), առ (այն), գլուխ (գործոց), ի (պատիվ), ըստ (որում), խառնի (ճաղանջ), գլուխ (գլխի), գեներալ (մայոր), ծայրից (ծայր), արևմուտքից (արևելք).

_____

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. Ընդգծել այն բաղադրյալ հատուկ անունները, որոնց միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով.

ՇԻՐԱՉԻ ԴԱՇՏ, ԳԵՂԱՄԱ ԾՈՎԱԿ, ԿԱՐՄԻՐ ԾՈՎ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐ, ՀԱՂԹԱՆԱԿԻ ՁԲՈՍԱՅԳԻ, ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ՍԱԽԱՐՈՎԻ ՀՐԱՊԱՐԱԿ, ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՁԲՈՍԱՅԳԻ, ԱՂՍՏԵՎԻ ԿԻՐՃ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Կետադրել.

Մի ուրույն աշխարհ է Սյունիքը: Թվում է երկիրն ստեղծելիս Աստված արարել է բոլոր գեղեցկությունները և ամենը հավաքվել է Հայաստանի այս շքեղ անկյունում քուլա-քուլա ամպեր ձյունապատ խրոխտ գագաթներին մերկ ժայռաբեկորներ կատարները միգապատ

բարձունքներում արև որ ոչ մի տեղ այնքան պայծառ չէ ինչպես այս յուրահատուկ ինքնատիպ աշխարհում:

ՄԱՍ II

Կարդալ բնագիրը և կատարել 6-20 առաջադրանքները.

(1) Կարծում եմ՝ աշխարհում եղել է երկու քրիստոնյա. մեկը ինքը՝ Քրիստոսը՝ հրեա, մյուսը՝ մայրս՝ հայ: (2) Մայրս միմիայն մի գիրք էր կարդում՝ Ավետարանը, և հավատարիմ նրա պատվիրաններին՝ անտերունչ աղքատներին էր օգնում, հորիցս գաղտնի բարերարություններ անում՝ սատար լինելով դժբախտներին, անօթևան որբերին, սովալլուկ ու կեղեքված մարդկանց: (3) Գիշեր-ցերեկ աղոթում էր՝ մագաղաթյա սրբապատկերները սեղմելով լուսե երեսին, խոնարհվում Աստծո զորության առջև՝ մինչև ուղնուծուծը համակված հոգեկան անդորրությամբ: (4) Աղոթում էր հորս հոգու, երկվորյակ պանդուխտ եղբայրներիս, աշխարհի համար, և արցունքները գլորվում էին մարմարյա այտերով:

(5) Անփարատելի թախիծն է ողողում էությունս, երբ հիշում եմ այն աղեկեզ արտասուքները, որ կաթկթել են մորս աչքերից իմ պատճառով, և չի դադարում մրմռացնող ողբն իմ որբացած հոգում:

(6) Հրաշեկ արև էր մայրս՝ խարտյաշ, ոսկեվարս, ոսկեհնչյուն ելևէջներով:

(7) Խավարչտին գիշերն անէանում է, տարրալուծվում, և ես ըմպում եմ վարդերի բույրը, ինչպես մորս կաթը:

Ըստ Վ.Թոթովենցի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. *6*-րդ նախադասությունից դուրս գրել *4* ածական.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. *3*-րդ նախադասությունից դուրս գրել *2* անկախ դերբայ և որոշել տեսակը.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Տեքստից դուրս գրել տրական հոլովով դրված *4* գոյական.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. *5*-րդ նախադասությունից դուրս գրել *2* շաղկապ, *2* դերանուն.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Որոշել *5*-րդ նախադասության կաթկթել են **բայի եղանակը, ժամանակաձևը, դեմքը, թիվը.**

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 11. *4*-րդ նախադասությունից դուրս գրել *1* ենթակա և ստորոգյալ.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 12. *7*-րդ նախադասությունից դուրս գրել *1* ուղիղ խնդիր, *1* որոշիչ.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 13. 2-րդ նախադասություններից դուրս գրել դերբայական դարձվածի *1* օրինակ և նշել, թե ինչ դիրքով է դրված.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 14. *2*-րդ նախադասություններից դուրս գրել բացահայտչի և բացահատյալի *1* օրինակ և նշել բացահայտչի տեսակը.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 15. Տեքստից դուրս գրել տեղի պարագայի *2* օրինակ.

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 16. Նշել, թե *6*-րդ և *7*-րդ նախադասություններից ո՞ր նախադասությունն է բարդ.

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 17. *6*-րդ և *7*-րդ նախադասություններից դուրս գրել բաղադրյալ ստորոգյալի *1* օրինակ.

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 18. Անտերունչ **բառի համար գրել *1* հականիշ.**

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 19. *6*-րդ նախադասությունից դուրս գրել հետադաս որոշչի *1* օրինակ.

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 20. Ըստ կազմության ինչպիսի՞ ն է աղեկեզ **բառը.**

_____

ՄԱՍ III

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 21. ՓՈԽԱԿԵՐՊԵԼ ՏՐՎԱԾ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՉՄԵԼ ՏՐՎԱԾ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ (ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.5)* ԳԾԱՊԱՏԿԵՐԸ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.1* Բարդ նախադասությունը փոխակերպել պարզի.

ա) Այս գործն այսօր այնքան ժամանակավրեպ է, որ երիտասարդության շրջանում չունի գրեթե ոչ մի ընթերցող:

_____

_____

_____

_____

բ) Նա համառորեն խնդրեց Անդրանիկին և Մելիքյանին, որ գոնե մի բաժակ գինի խմեն:

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.2* Պարզ նախադասությունը փոխակերպել բարդի*.*

ա) Վերադառնալով հայրենիք՝ հայոց արքան ձեռնամուխ է լինում ավերված տաճարի կառուցմանը:

բ) Այս թուղթը տանողները Քրիստոսին պատահեցին Երուսաղեմում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.3* Ուղղակի խոսքը փոխակերպել անուղղակիի*.*

ա) –Ես բարձանում եմ վեր,- ասաց փոքրիկ ծառը:

բ) –Ընդունում եմ քո ասածները,- պատասխանեցի ես:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.4* Անուղղակի խոսքը փոխակերպել ուղղակիի*.*

ա) Մեղուն ասաց, որ իր նախորդ կյանքում ինքը ծաղիկ է եղել:

բ) Վիրավորը խնդրեց զինվորին, որ նա ասի իրեն, թե որտեղ է ինքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ***21.5*** **Կազմել տրված նախադասության գծապատկերը (համարակալել նախադասությունները).**

Ֆրանսիայի գեղատեսիլ այդ անկյունը հեռու է կենտրոնական ճանապարհներից, ապրում է մեկուսի, խաղաղ կյանքով, փռված է ճերմակաթույր մարգարտածաղիկներով ծածկված մարգագետինների վրա: